

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՉՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ԼԵԶՎԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.
ՏՐԱՊԻԶՈՆ, ԾԻՆԳԻՐ, ՄԻՄԵՐ

Տրապիզոնը քաղաք և նավահանգիստ է Փոքր Ասիայում՝ Սև ծովի հարավային ափին: Ըստ «Հայ սփյուռք» հանրագիտարանի՝ Տրապիզոնում հայերը հաստատվել են 7-րդ դարից: 1895-96-ի համիդյան կոտորածների ժամանակ բազմաթիվ հայեր զոհվել են, շատերը գաղթել են Սոչի, Գուդաուդա, Բաթում, Ղրիմ և այլուր: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Տրապիզոնում ապրում էր մոտ 15000 հայ: Մեծ եղեռնի ժամանակ նրանց մի մասը կոտորվել է գաղթի ճանապարհին՝ Ջանիկի լեռներում, իսկ քաղաքում մնացածները նավով դուրս են բերվել ծով և ջրահեղձ արվել¹:

Տրապիզոնի գավառի Ծինգիր և Միմեր բնակավայրերի՝ 1915 թ. Մեծ եղեռնից փրկված բնակիչները ևս գաղթել և բնակություն են հաստատել աշխարհի տարբեր կողմերում, այդ թվում՝ նաև Աբխազիայում, որոնց օգնությամբ էլ Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով գրանցվել են այդ գյուղերի խոսվածքները: Դրանք լրացրել է մանկավարժական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Սարգսի Թոփալյանը՝ ծնողների օգնությամբ: Իրենց գյուղի և բնակչության մասին նա հայտնում է հետևյալը. «Բնակավայրը հին անվանմամբ կոչվում էր Ջուղին կէղ: Այժմ բնակավայրը կոչվում է Թագածյաշտա: Վարչական բաժանմամբ այն մտնում է Աբխազական ԻՍՍՀ Քուլթիփիդի շրջանի մեջ: Բնակիչները տեղացիներ չեն, տեղափոխվել են Թուրքիայի տարբեր վայրերից՝ Տրապիզոնից և Օրդուից: Գաղթած բնակչության մի մասը բնակություն է հաստատել այս գյուղում, իսկ մյուս մասը՝ լեռնային շրջաններում: Գյուղում հայերի հետ ապրում են նաև վրացիներ, մեգրելներ, ռուսներ, աբխազներ»²: Ջ. Թոփալյանի ծնողները գաղթել են Տրապիզոնի գյուղերից /ի դեպ, լեզվական տեսակետից Տրապիզոնի քաղաքը տարբերվում է գյուղերից/: Հայրական կողմը Տրապիզոնի Ծինգիր, մայրականը՝ Միմեր գյուղերից են գաղթել:

Խոսվածքների գրանցման աշխատանքները ղեկավարել է պրոֆեսոր Հ. Մուրադյանը. «Ջ. Թոփալյանի աշխատանքը ստուգվել ու ճշգրտվել է բարբառախոսի մասնակցությամբ: Անհրաժեշտաբար այն արտագրվել է մեր կողմից»³:

Սույն աշխատանքում ներկայացվում են Տրապիզոնի Ծինգիր և Միմեր բնակավայրերի խոսվածքների (այսուհետև՝ խոսվածքներ)

¹ «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 182-183:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

հնչունաքերականական և բառապաշարային առանձնահատկությունները համաժամանակյա քննությամբ: Վերոնշյալ գյուղերի խոսվածքները ուսումնասիրված չեն. նրանց վերաբերյալ բարբառագիտական գրականության մեջ դիտարկումներ չկան, մինչդեռ նրանց լեզվական բնութագիրը կարևոր է հայ բարբառագիտության համար: Խոսվածքների լեզվական բնութագիրը տրվում է՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Տրապիզոն. Ծինգիր, Միմեր» աշխատանքի⁴:

Հինհայերենյան ձայնավորները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, գործառնելով խոսվածքներում, որոշ փոփոխությունների են ենթարկվել: Ա ձայնավորը փոփոխություն է կրել միայն *ւ*, *ն* ոնգայիններին նախորդող դիրքում՝ դառնալով *օ* (*ամիս-օմիս, թան-թօն, համար-հօմար, մանել-մօնուշ, նշան-նշօն* են): Այն փոփոխության չի ենթարկվել հինհայերենյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ հնչուններին կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող դիրքում (*բարակ-պարագ, ջարդել-ճայթուշ, դանակ-տընագ, ձագ-ծակ* են), ինչպես նաև շչականներին նախորդող և հաջորդող դիրքերում (*ճանճ-ջանջ, բաժին-պաժին, խաչակնքել-խաչ հանել, խարշել-խաշել, արժել-արժել, կարճ-գարջ* են): *Ու* և *ի* ձայնավորները նույնպես փոփոխություն չեն կրել. Դրանք անփոփոխ են մնացել ինչպես շեշտակիր դիրքում (*թուք-թունկ, փուշ-փուշ, սուտ-սուդ, կնիկ-կընիգ, կծիկ-գըձիգ, քենի-քենի* են), այնպես էլ ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից հետո (*բուրդ-պուշտ, գութան-գուտան, դուռն-տուռ, ձուկն-ծուգ, ջուր-ճուր* են):

Ո և *ե* երկբարբառներ խոսվածքներում չեն գործառնում: *Ո-ի փոխարեն* միավանկ և երկվանկ բառերի *սկզբում* (*որբ-օրփ, որդ-օրթ, ով-վօվ, ոչխար-օձխար, ոջլոտ-օձլօդ, ոռնալ-օռնուշ, ոսկի-օսկի* են), հինհայերենյան ձայնեղներին (*բ, գ, դ, ձ, ջ*) կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող (*բողկ-պօղգ, գործ-կօրձ, ձոր-ծօր* են), ինչպես նաև բառամիջի շեշտակիր և նախաշեշտ դիրքերում (*կոշտ-գօշդ, նոր-նօր, թողուլ-թօղուշ, խոնարհ-խօնար* են) գործածվում է *օ* ձայնավորը: Խոսվածքներում չգործառող *ե-ի* դիմաց միավանկ և երկվանկ բառերի սկզբում (*ելանել-էլլուշ, երեք-իրէկ, երկայն-էրգըն* են), բառամիջի շեշտակիր (*թել-թէվ ցեց-ցէց, մեղր-մէղրր, ծեծ-ձէձ* են), ինչպես նաև *ռ* ձայնորդին նախորդող դիրքերում (*բենն-պէռը, սիսենն-սիսէռ, մեննել-մէռնուշ, ձմենն-ձրմէռ*) առկա է է ձայնավորը:

Հինհայերենյան երկբարբառները վերածվել են ձայնավորների: Այսպես՝ *աւ* երկբարբառի փոխարեն բոլոր դիրքերում գործածվում է *օ* (*աւտար-օդար, աւձ-օց, աւրհնել-օտտնուշ* են), *ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց *ու* ձայնավոր (*բոյն-պուն, թոյլ-թուլ, կապույտ-գաբուդ, բոյթ-փուտ* և *ալիւր-ալուր, աղբիւր-ախպուր, հարիւր-հարուր, հիւսել-հուսուշ*,

⁴ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր*, Տրապիզոն, Ծինգիր, Միմեր, հ. 99ա, (այսուհետ՝ ՇԲԱՆ, 99ա):

նեղություն-նեղություն են): Ձայնեղ պայթականների և կիսաշփականների (բ, գ, դ, ձ, ջ) դիմաց առկա են խուլ հնչյուններ (բարակ-պարակ, գազան-կազան, դանակ-տրնագ, ջարդել-ճայթուշ են), խուլերի դիմաց՝ ձայնեղներ (կակդել-գագոդնուշ, պղտոր-բրդդոր, տախտակ-դախտագ, ծաղիկ-ձաղիգ են): Փոփոխության են ենթարկվել նաև պայթական և կիսաշփական հնչյուններին նախորդող *ր* ձայնորդը՝ վերածվելով *յ* հնչյունի /արծաթ-այձատ, գորտ-կօյդ, զարթուն-զայտուն, ցուրտ-ցույդ են), դ հնչյունը՝ փոխվելով *կ*-ի (ղավուրմա-կավուրմա, դարիբ-կարիբ, դափաղ-կապաղ են): Դ-ն անփոփոխ է մնում հատուկ անուններում և որոշ բառերում (Ղուգաս, Ղազար, դալմադալ, դուշ, դայիմ են) : Բառի բոլոր դիրքերում անփոփոխ են մնում հինհայերենյան *խ* և *հ* խուլ հնչյունները (խեղդել-խըղտուշ, խրատ-խըրատ, ծախել-ձախուշ, նախանձ-նախանձ, գլուխ-կըլէխ, հասանել-հասնուշ, համ-հոմ, դահիճ-տահիջ, ռեհան-ռէհան են), օտար բառերի բառակզբի *ֆ* հնչյունը (ֆայտոն-ֆայտոն, ֆլան-ֆըլան, դարիբ-դարիբ են), բառամիջի և բառավերջի դիրքերում գործառող *ռ* ձայնորդը (բոնել-պըռնուշ, քառասուն-քառսուն, բուռն-պուռ, կռիվ-գըռիվ են):

ՀԲԱ-ի ծրագրով տրված հասկացական-բառանվանողական զուգաբանություններին խոսվածքներում համապատասխանում են հնչյունական տարբերակներ և բառային տարբեր արտահայտություն ունեցող ձևեր: Մտորև ներկայացնում ենք հասկացական-բառանվանողական այն զուգաբանությունները, որոնց իմաստները վերոնշյալ խոսվածքներում դրսևորվում են բառային այլ արտահայտություններով: Դրանք են՝ *ամպ-մըռալ, անտառ-սար, ծիածան-ձիրանի կօղի, սառույց-բաղկ, ստվեր-շուկ, կողմ-թարաֆ, գիծ-խագ, անկյուն-բուջախ, տանիք-ձաձուգ, առաստաղ-թավօն, եկեղեցի-խաճ, առու-կանաֆա, ցեխ-ջօռ, արմատ-քօկ, տերև-թէր, կեղև-կաբուխ, կորիզ-հունդ, սերմ-հունդ, եգիպտացորեն-լագդ, ընկույզի միջուկ-հաց, բարդիկավաղ, սածիլ-ֆիդօն, ճակնդեղ-պագուգ, գազար-մարկօլ, ծներեկ-ձիմէլ, հարդ-տարմօն, կողով-գալատ, փոցի-դըրմուղ, եղան-վիլկա հէսան-սըրիչ քար, փլավքամիչ-սուզգա:չ, ունկ-բօշ, խցան-պրօպկա, ձագար-խօնի, իլիկ-քարմօն, պարան-չիվօն, կապերտ-չուլ, անկողին-յաթախ, ակնոց-գյօզլուղ, ձեռնոց-թաթնօծ, օձիք-յախա, քղանցք-փէշ, տրէխ-չարօխ, տրէխի քուղ-ուշխուր, օժիտ-ճէհէզ, խնամախոս-դինգյուրջի, երէխա-չօջուխ, տատ-մէձ մամա, տերտերակին-իրիցկին, քահանա-դէրա, անորորդի-կայինջի, ամուսին-էրիգ, տագերկին-ներ, ծերունի-էխտիյար, արու գավակ-մօնձ, հարևան-տըրգիծ, մուրացկան-ժողվօնքձի, ջրաբաշխ-սուջի, որսորդ-ավջի, հովիվ-չօբօն, անասուն-մալ, կրիա-թօզբաշու, չղջիկ-թավանգուշի, մողես-խլէզ, սարդ-գայտ, որդ-ջիջու, խխունջ-գօխլիձ, թռչուն-հաֆք, հոպոպ-սօնրիգ, աքաղաղ-խօրօգ, թուխս-մօջու, փետուր-թէրուր, ձու-հավգիտ, խայթոց-գիջ, ատամն-ագռա, բուռ-ջօնգ, բռունցք-յումբուխ, ազդր-դալձա, պարանոց-ջիդ, կոկորդ-բօղագ, մէջք-գըռնագ, եղջուր-գօղէշ, թևատակ-կօլթուղ, շրթունք-բըրբունկ, արտևանունք-թայտիձ, միզապարկ-շըռըմօն,*

պգուկ-շուղ, վերք-յարա, կարմրուկ-քուտէշ, թույն-աղու, կաթնապուր-սուտլի, ճարպ-սալա, ձալար-բուլղուր, աղանձ-փըռընչօր, ծամոն-գիվ, տիկնիկ-կուկլիգ, սրինգ-կավալ, համբույր-բաշ, երկյուղ-վախ, ոխ-հէրս, ժամանակ-վախտ, գեղեցիկ-սիրուն, լավ-խաս, գեր-քօքը, նվազ-զըզար, նիհար-գայիֆ, դառն-լէդի, բութ-քօռ, սպիտակ-ջերմագ, փոքրիկ-բիջիգ, կաղ-թօփալ, կորամեջք-գօմբուր, համր-լալ, պեպնոտ-շիլլի, գանգուր-խըջուջ, փափուկ-գագօղ, անպոչ-գուդուգ, ժլատ-գուձի, մերկ-չըպլախ, սառը-բաղ, կիսրար-օրթախ, թխել-էպուշ, աշխատել-պօնուշ, հավաքել-ժողվուշ, շարժել-ժաժուշ, ուղղել-շիդգուշ, սառչել-բաղէլ, կակագել-թէլֆատտուշ, հանդիպել-ռաստ էգուշ, գրկել-օնտուշ, գնալ-էշտուշ, հոգնել-նաճարուշ, հրել-գօրուշ, բարկանալ-հէրսօղուշ, այժմ-հիմի, ճիշտ-շիդագ, գաղտնի-խալվատկը, կարծես-կիդէս տա, ամեն-բիտուն, ինչպես-ինձօ, ու՞ր-նէ՞ր, մոտ-քօլ, բացի-գաղ, կրեայ-թօսպաղու:

Խոսվածքներում գործառող –եր (էր) և –նի հոգնակերտների զուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևախմաստային առանձնահատկություններով: –Եր (էր) վերջավորությունը բաղադրվում է միավանկ բառերին (փագ-փագէր, հունդ-հընդէր, մօմ-մօմէր են), կենդանիների՝ միավանկ հիմքերով անուններին (այճ-այճէր, էշ-էշէր են), գրաբարյան –ն վերջնահնչյունով միավանկ բառերին, որոնց գերակշիռ մասը հատկանշվում է հոգնակերտից առաջ ն վերջնահնչյունի պահպանմամբ (ձունգ-ձընգնէր, պէռ «բէռն»-պէռնէր, տուռ-տըռնէր, հայս-հայսնէր են), գաղտնավանկ վերջնավանկով երկվանկ բառերին (սօնր-սօնրէր, սայր-սայրէր, մանր-մանրէր են), ինչպես նաև միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդ բառերին, որոնց վերջնաբաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնությունությունը, այսպես՝ աղիճուր-աղիճըրէր, դօնդէր-«տանտեր»-դօնդէրէր են: Նի հոգնակերտ վերջավորությունը բաղադրվում է բազմավանկ բառերին (ընգէր «ընկէր»-ընգէյնի, էրինջ-էրինջնի, քաղակ-քաղկընի, ձաղիգ «ձաղիկ»-ձաղգընի են): Մարմնի գույգ մասերի դեպքում պահպանվել է երկակի թվի գաղափարն արտահայտող վի հոգնակերտը (օնգօջ-օնգօջվի, աճ-աճվի, ձունգ-ձընգվի, ծէռ-ծէռվի են): Չայնավորահանգ բառերը ստանում են ք(կ) հոգնակերտ թեքությո՞ւր, այսպես՝ քէռի-քէռիկ, մաղնի-մաղնիկ, դըղա-դըղակ, քօմի-քօմիկ են:

Խոսվածքները հատկանշվում են հոլովանիշ վերջավորությունների և հերթագայությունների առկայությամբ, ինչպես նաև եզակի թվի հարացույցում ի և օն հոլովանիշ թեքությո՞ւնների, իսկ հոգնակիում՝ ու-ի ընդհանրական արժեքով: Օն հոլովանիշ վերջավորությունը գործածվում է գրաբարյան ն վերջնահնչյունով բառերի, ինչպես նաև կենդանիների և թռչունների անունների եզակի թվի հարացույցում՝ կազմելով նրանց սեռական-տրական հոլովաձևերը (յէգ-յէգօն, օճխար-օճխարօն, ուլիգ-ուլիգօն, ձունգ-ձընգօն, տուռ-տըռօն են), (կաքավ-կաքավի(ն), կատու-կատուի(ն), հավ-հավի(ն), աղվէս-աղվէսի(ն) են): Թեև վերոնշյալ խմբերի

որոշ բառեր սեռական-տրական հոլովաձևեր կազմում են *-ի* հոլովանիշ վերջավորությամբ (մադ-մադի, մեճկ-մեճկի, կումեշ-կումշի են), սակայն գերակշում է *-օն* թեքությո՛ր: Անձնանունները *ի* հոլովման են ենթարկվում (Գարաբեդ-Գարաբեդի, Անուշ-Անուշի(ն), Գարօ-Գարոյի են), տեղանունները՝ *ի* և *ու* (Պոլիս-Պոլսի, Գարս-Գարսի, Մուշ-Մուշու, Վան-Վանու են): Հոգնակի թվում սեռական-տրական հոլովաձևերը կազմվում են *ու* վերջավորությամբ (*տընգընի-տընգընուն, ձաղգընի-ձաղգընուն, դընէր-դընէրուն են*): Հոլովանիշ հիմքի և *-ոջ* (էճ) թեքությո՛րի բաղադրությամբ են ձևավորվում ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի սեռական հոլովաձևերը, օրինակ՝ *ընգէր-ընգէրօճ, կէսուր «սկէսուր»-կէսրէճ, դալ «տալ»-դալէճ, գընիգ-գընէճ* են: Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են *-վօն* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *աշուն-աշնօն, ժամ-ժամվօն, շապատ-շապատվօն* են: Բացառական հոլովը ձևավորվում է *-էն* (ըն) հոլովանիշ թեքությո՛րի և հոլովանիշ հիմքի գուգորդելիությամբ, այսպես՝ *թօնըն «թոռից»-թօնէրըն, խօղըն «հող»-խօղէրըն, կէղըն «գէտից»-կէղէրըն* են: Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *-ով* հոլովանիշ վերջավորությամբ բաղադրված կազմություններով, այսպես՝ *շապատով, օմսով «ամսով», դարիյով, մըզնով* են: Ազգակցական հարաբերություն ցույց տվող *հայր, մայր, եղբայր* բառերի դեպքում հոլովական վերջավորությունից առաջ ավելանում է *ս* կամ *դ* դիմորոշ հոդը, այսպես՝ *հօղմօվ/հօյսմօվ, ախայօղմօվ/ախայօյսմօվ, մօյսմօվ/մօյղմօվ*: Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է տրական հոլովաձևով (սընդուգին-սընդուգնուն, դաշտ-դաշտին-դաշտերուն, կէղին-կէղերուն են) կամ *մէշ* հետադրության և տրական հոլովաձևի բաղադրությամբ (*կէղին մէճ, ճուրին մէճ, տաշտին մէճ, աշխարին մէճ* են):

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը կազմվում է գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի* հոլովանիշ թեքությո՛րի գուգորդությամբ, այսպես՝ *ընծի, քէզի, մէզի, ծէզի*: Անձնական դերանունների բացառական հոլովաձևեր կազմվում է տրականի հիմքի և *-մըն* հոլովանիշ թեքությո՛րի (*ինծմըն, քէզմըն, մէզմըն, ծէզմըն, ուրմըն, ուրինծմըն*), իսկ գործիականը՝ տրականի հիմքի և *-մօվ* վերջավորության համադրությամբ (*ինծմօվ, քէզմօվ, մէզմօվ, ծէզմօվ, ուրմօվ, ուրինծմօվ*):

Խոսվածքներում անորոշ դերբայի վերջավորությունները միօրինականացվել են, և բոլոր բայերն ունեն *-ուշ* ձևությո՛րը⁵, այսպես՝

⁵ Հ. Աճառյանը *-ուշ* վերջամասնիկը փոխառյալ է համարում թուրքերենից (տե՛ս Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, Երևան, 1947, էջ 157): Մեկ այլ կարծիքի համաձայն՝ այն առաջացել է *-ուլ* ձևությո՛րի փոփոխությամբ (տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Երևան, 1953, էջ 60): Մենք ևս համամիտ ենք Ա. Աբրահամյանի տեսակետին և կարծում ենք, որ երևույթը սկսվել է չ ստակածանց ունեցող բայերից (փախչուլ, ուռչուլ), որոնցում չ-ի ազդեցությամբ կատարվել է լ>շ ձևափոխությունը, որն այնուհետև համաբանությամբ ընդգրկել է նաև մյուս բայերը:

ձամուշ (ծամել), զօնչուշ (կանչել), զագղուշ (փափկել) և այլն⁶։ Բացակայում են անկատար և ապառնի դերբայները։ Վաղակատար դերբային բնորոշ է - էր վերջամասնիկը (*մընացէր իմ, զարմացէր իմ* ևն), հարակատարին՝ -ած (*էփած, նըշանված, զարմացած* ևն)։ Ա խոնարհման բայերի ենթակայական դերբայը բաղադրվում է անցյալի հիմքով (*կօղցօղ, զարմացօղ, մօտէցօղ, հասկըցօղ, վախցօղ* ևն)։ Ժխտական դերբայի իմաստը արտահայտվում է անորոշի հիմքի և -էր, -ար, -իր թվադիմանիչ թեքությունների զուգորդությամբ, այսպես (*չիմ*) *ըսէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիր* ևն։

Խոսվածքներում եղանակային իմաստները դրսևորվում են 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական-ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական։ Ըղձական եղանակի ժամանակաձևերի իմաստով գործածվում են գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերը, որոնք, կրելով հնչյունական փոփոխություններ, ձևային տարբերակվածությամբ չեն հատկանշվում, այսպես՝ *կըրէր, կըրէրդ, կըրէր, կըրայկը, կըրէկը, կըրէնր*։ Ըղձական անցյալի հոգնակի 1-ին դեմքում ն ձայնորդը բացակայում է, և հոգնակի 1-ին ու 2-րդ դեմքերի ձևաբանական տարարժեքությունը դրսևորվում է լծորդակիր ձայնավորներով, այսպես՝ *խօրատէր (գրուցէի), խօրատէրդ, խօրատէր, խօրատակը, խօրատէկը, խօրատէնր*։ Սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի հարացուցային ձևերը կազմվում են *կու(գու)* եղանականիչ մասնիկի և ըղձական ապառնիի ու անցյալի ժամանակաձևերի համադրությամբ, այսպես՝ *մընօմ գու, մընաս գու, մընա գու, մընօկ գու, մընակ գու, մընօմ գու*, անց. անկ.՝ *խօրատէր գու, խօրատէրդ գու, խօրատէր գու, խօրատակը գու, խօրատէկը գու, խօրատէնր գու*։ Սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի, հարկադրական ապառնիի և անցյալի ապառնիի իմաստները դրսևորվում են *պիտի* (բիդի) եղանականիչ մասնիկի և դիմավոր բայաձևերի հարադրությամբ։ *Բիդի* եղանականիչ մասնիկի սկզբնահնչյունը դիմային թեքության համաբանությամբ եզակի 1-ին դեմքում փոխվում է *մ*-ի, այսպես՝ *կըրի մինի, կըրիս բիդի, կըրա բիդի, կըրիկ բիդի, կըրէկ բիդի, կըրին բիդի*։ Վերոնշյալ ձևափոխությունը չի գործում հարկադրական անցյալի դեպքում՝ *կըրէր բիդի, կըրէրդ բիդի, կըրէր բիդի, կըրակը բիդի, կըրէկը բիդի, կըրէնր բիդի*։

Ժխտական խոնարհման կառուցատիպերը ձևավորվում են նախամասնիկների կամ օժանդակ բայի զուգորդությամբ։ Եղանականիչ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական (անցյալ-ապառնի) ժխտական կազմությունները ձևավորվում են *հէչ* ժխտական մասնիկով,

⁶ Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական առանձնահատկությունները, Եր., 1953, էջ 59։

որը բաղադրվում է հաստատական խոնարհման ձևերին, այսպես՝ անց. կատ. *կըրէծի հէչ, կըրէծիր հէչ, կըրէծ հէչ նն, ըդձ. ապառնի՝ խըմիմ հէչ, խըմիս հչէ, խըմա հէչ նն:*

Եղանականիշ նախամասնիկով հատկանշվող ժամանակաձևերի ժխտական կազմությունները բաղադրվում են օժանդակ բայի ժխտական ձևերի օգնությամբ: Ժխտական ներկայի ու անցյալ անկատարի (համապատասխանաբար ենթադրական ապառնիի և անցյալի) իմաստներն արտահայտվում են օժանդակ բայի ժխտական ձևերի և *իլ* վերջամասնիկով բայաձևի հարադրմամբ, այսպես՝ *չիմ (չէյը) կըրիլ (չեմ (չէի) գրում, չեմ (չէի) գրի), չիս (չէյը) կըրիլ, չի (չէր) կըրիլ, չիկ (չայկը) կըրիլ, չէկ (չէկը) կըրիլ, չին (չէյնը) կըրիլ:* Սահմանական ապառնիի և անցյալ ապառնիի, հարկադրական ապառնիի և անցյալի ապառնիի ժխտական խոնարհման կազմությունները բաղադրվում են օժանդակ բայի ժխտական ձևերի և ենթակայական դերբայի գուգորդությամբ, այսպես՝ *կըրօղ չիմ, կըրօղ չիս, կըրօղ չը, կըրօղ չիկ, կըրօղ չէկ, կըրօղ չին:* Հրամայական եղանակի եզակի թվի իմաստը արտահայտվում է *ա, ի* վերջավորություններով բաղադրված կազմություններով: *Ա* վերջավորություն են ստանում *ե և ա* խոնարհման պարզ բայերը (*աբոա՛, պըռնա՛, գըղոա, պադմա՛, մընա՛, ադա՛* նն): *Ե* և *ա* խոնարհման ածանցավոր բայերի հրամայականի ձևերը կազմվում են *-ի* վերջավորությամբ (*պայսըծի՛, մէձըծի՛, մօղգըծի՛* նն): Հրամայականի հոգնակի թվի ձևերը բաղադրվում են *-էք* վերջավորությամբ, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին (*պաժնէժէ՛կ, կըրէժէ՛կ, էպէժէ՛կ, լըսէժէ՛կ* նն): Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի և մէկ* արգելական մասնիկների հետադաս կիրառությամբ (*խաղալ մի՛, էշտալ մի՛, մընալ մի՛, խաղալ մէկ, պըռնիլ մէկ, կըրիլ մէկ* նն):

Խոսվածքները բնորոշվում են *մը* անորոշ հոդի հետադաս գործածությամբ, այսպես՝ *Մաշտ մը, գընիգ մը գըլլին* «Մի մարդ ու մի կին են եղել»: *Օր մը աս մաշտը հիվըննա գու* «Մի օր այս մարդը հիվանդանում է»: Որոշյալությունը դրսևորվում է *ը և ն* որոշիչ հոդերով (*Ձառը ձաղգէցալ* «Ձառը ծաղկեց»: *Լիզուն էրգըն ա* «Լեզուն երկար է»): Հատկացուցիչը և հատկացյալը համաձայնեցվում են առմամբ. որոշյալ հատկացյալի հետ գործածվում է որոշյալ հատկացուցիչ (*ձառին թէրը «տերն», այդին խօղը, Մակօյին մօնճը նն*), անորոշի հետ՝ անորոշ (*ձառի թէր, այդի խօղ, Մակօյի մօնճ նն*): Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը գործածվում է ստորոգյալին նախադաս դիրքով (*Գադուն մուգ պըռնէժ, Ծին սաղգէժավ նն*): Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը տրականաձև հայցականով է ձևավորվում (*Մարը սիրա գու Արշագին* «Մայրը սիրում է Արշակին», իսկ իրի անունների դեպքում՝ ուղղականով (*Ագօպը դուն շինա գու* «Հակոբը տուն է շինում»: *Մինասը քար դաշա գու* «Մինասը քար է տաշում»): Նպատակի պարագան արտահայտվում է անորոշ դերբայով, այսպես՝ *Էզավ հաց ուղուշ* «Եկավ՝ հաց ուտելու»,

Կրնած այդը ճշրուշ «Գնաց՝ արտը ջրելու» են: Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է տրական հոլովաձևով (*Օմնին ճուր գա* «Ամանի մեջ ջուր կա», *Գաբոի կէղին «Գյուղում է ապրում»*): *Խոսվածքը հատկանշվում է հետ, մոտ, մեջ, վրա, առջև* կապերի հետադաս կիրառությամբ, այսպես՝ *քարին մօդ* «քարի մոտ», *ախպօրը մօդ* «եղբոր մոտ», *ընգէյնուն հէդ* «ընկերների հետ», *դօնը առաճ* «տան առաջ» են:

Այսպիսով, Տրապիզոնի Ծինգիր և Միմեր գյուղերի խոսվածքները բնութագրվում են հնչյունաքերականական ու բառապաշարային հատկանիշների ինքնատիպ դրսևորմամբ: Աշխատանքը կարևորվում է արևմտահայ խմբակցության՝ կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

GAYANE GEVORGYAN-WESTERN ARMENIAN UNSTUDIED SPEECHES
LINGUAGEOGRAFICAL CHARACTERISTICS: Trapizon: Cingir, Mimer - The speeches of Mimer and Cingir are characterized by the abundance of pairs phonetical grammar character and vocabulary couples, and are presented as a unique manifestation of Armenian dialectic. The article is important for the preservation of the preserved state of the dialectic units facing the loss of the Western Armenian territory and the fact that the dialectic material is saved from irreversible loss.